ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 348-Ա

11 հունիսի 2026 թ.

ԱՐՄԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԼՃԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.5-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Արմինե Ասլանյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Արմինե Ասլանյանին 2026 թվականի հունիսի 12-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև 2026 թվականի սեպտեմբերի 29-ը ներառյալ:

2. Արմինե Ասլանյանին՝ աշխատանքը սկսել 2026 թվականի հունիսի 12-ից:

11.06.2026

Կարեն Սարգսյան

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ